

թեթեւ խորութեամբ, ըստ որում կը գործածուէր միայն պինդ կերակրոց, ինչպէս էին «խորտիկք» որ «սկտեղք» ի սեղան կը բերուէին (Ոսկ. Մտթ. Ա, 688. Թղթ. Ա, 852): Նոյն պատճառաւ Մկրտչին զըլուինն ալ բերուեցաւ «ի վերայ սկտեղ». եւ «ի վերայ», ըստ որում «ի մէջ» ըսուելու չափ խորութիւն չունէր: Գր. Արշարունուոյ այլաբանական բացատրութեամբ՝ միրգն ալ ասով ի սեղան կը բերուէր. «ԶՔրիստոսի փրկութեանն պտուղս, կ'ըսէ առ վահան կամսարական, զոր կարգեցի (ի) սկտեղ պատմութեան բանիս, ընծայելով ի սեղան քաջախորհուրդ իմաստութեանդ քո» (Ա): Միով բանիւ՝ «սկտեղք» հայ տաճարին ամենէն սովորական սպասնեան էին (Եղիշէ. 173) — Սկուտղ՝ ձեւին կոչումն էր եւ ոչ մեծութեան, որ կրնար զանազան լինել: Այսպէս Ս. Սահակայ Տեսլեան մէջ կայ «սկտեղ մի մեծ արծաթի» իբր եկեղեցական սպաս, որոյ «ի վերայ» դրուած էր «նափորտ մի բեհեզեայ ծալեալ» (49). ուրեմն հոս ալ խոր չէր այն ու պէտք չէր լինել: Եւ «մեծ» էր, որով կը տարբերէր կերակրոյ յատուկ փոքրերէն: Անօթիս բոլորակութեան համար փիլոն արեւու անիւր «սկուտղ» կ'անուանէ (Մն. 598): Մի եւ նոյն պատճառաւ՝